Հրաւիրուած են լինում նաև վերջինիս մօտիկ ազգականներից մի քանիսը. սովորական հարց ու բարևից յետոյ աղջկայ հայրը հարց է տալիս նշանախօսներին.—

—Ո՞ւր էք եկել մեր տունը։

—Ձեր սէրն է բերել,—պատասխանում է քահանան։

—Եկել էք ինչ անէք։

—Եկել ենք, որ ձեր բաղիցը մի ծաղիկ քաղենք։

—Բարի է, մենք էլ կամենում ենք.—պատասխանում է աղջկայ հայրը. դրա վրայ տղայի հայրը համբուրում է նրա ձեռքը, այդ ժամանակ հաւաքուածները շնորհաւորում են՝ «Աստուած շնորհաւոր անէ, բաղդաւոր ըլին, մի բարձի ծերանան» ասելով։ Այնուհետև տղայի հայրը գնում է մօտակայ սենեակը, ուր հարսնացուն է լինում, այդտեղ նա համբուրում է աղջկայ երեսն ու ճակատը և տալիս է այն թաշկինակը, որի մի ծայրին կապուած է լինում մատանին, իսկ միւս ծայրին 10—20 թուման փողը. ապա վերադառնում է առաջւայ սենեակը, ուր քահանան մի քանի սովորական խօսքերից յետոյ օրհնում է, դրա վրայ նորից շնորհաւորում են երկու կողմին, յետոյ քաղցրաւենիք են բաժանում և թէյ խմում, որին յաջորդում է ընթրիքը։

Նուէրներ: Նշանուած ժամանակամիջոցում ամեն մի նշանաւոր տօն օրերին՝ ինչպէս Բարեկենդանին, Ծաղկազարդին, Զատկին, Համբարձմանը, Վարդավառին երկու կողմից—աղջկայ և տղայի տներից, միմեանց փոխադարձաբար ընծաներ են ուղարկում, որ բաղկացած է լինում անուշեղէններից՝ գաթայ, հալւայ և զանազան ընծաներ՝ օղի, ներկած ձու, կօշիկ, գլխի շոր, գուլպաներ, մետաքսէ թաշկինակներ, ընկոյզ, չոր մրգեղէն և այլն։

Այրիի նշանադրութիւնը: Այրի կինը եթէ որդիներ չունի, վերադառնում է հօրանց տուն և ամուսնանում, իսկ եթէ որդիներ ունի, մնում է սկեսրանց տանը։ Ընդհանրապէս այրի կանանց նշանադրութեան ու պսակադրութեան հանդէսները շատ պարզ են լինում։ Այրի կնոջը նշան դնելիս,